


պիտի չկարենայ մեր սիրելի Գովրիկեանը ծածկել մեր աչքէն ու մեր մտքէն: Գովրիկեան գիտցաւ թէ Վանքին եւ թէ Ազգին մէջ ցուցադրել իրական յիշատակարաններ, որոնք ընդ երկար պիտի պահպանեն իր անունը՝ գործունեայ հայ անհատներու շրջանակին մէջ, քայց ընդյաւէտ պիտի յիշեցնեն նաեւ իւր առաքինի վարքը, աղօթասիրութիւնն եւ իւր խոհեմական Առաջնորդութիւնը:



Գովրիկեան Աբբայօր արքեպիսկոպոսական զինանշանը:




ՀԱՆԳԻՍ

ԴԿՏ. Հ. ԱՂԵՔՍԱՆԻՐ ՎՐԴՊ. Ի ՄԱՏԻԿԵԱՆ

Մխիթարեան Միաբանութիւնս խորին վշտով զգածուած կը ծանուցանէ «Հանդիս», յարգոյ ընթերցողներուն իր կարկառուն դէմքերէն մէկուն տարածած մահը յանձին Հ. Աղեքսանդր վրդ. Ի Մատիկեան:

Ծնած 5 Յուլիս (հին տով.) 1886ին Տայոց աշխարհի Խոտորչոյ Կրման գիւղը, հնգետասանամեայ պատանին Դանիէլ — այս է Մատիկեանի աւագանի անունը — չգտնելով իր բնագաւառին մէջ քաւարար յագուրդ ուսման՝ կը դիմէ Վիեննա-



1910ին կը քահանայանայ իբրեւ անդրանիկ ձեռնադրեալը Գովրիկեան Գերապայծառ Աբբայօր:

Թէպէտ քաջ հրահանգած էր Հ. Մատիկեան վանքին արտնին կղերանոցի մէջ աստուածաբանական ուսումները, սակայն զանոնք աւելի կատարելագործելու նպատակաւ կը յաճախէ Աւստրիոյ ոստանին համալսարանը, եւ յաջողութեամբ աւարտելով աստուածաբանական տիպարութիւնը:

Մխիթարեան Միաբանութեան, եւ ընդունելով արտաքին ու եկեղեցական գիտութիւններու շրջանը՝ նաեւ ընդունելով ծիղերը՝ 1917ին կը պսակուի ակադեմիական Դոկտորի տիտղոսով: Հայերէնէն զատ գիտէր նա լատիներէն ու գերմաներէն, ծանօթ էր նաեւ գրական աշխատանքներու. մասնաւորաբար իր նախասիրութեան առարկայ ըրած ըլլալով հայ ազգային պատմութիւնը՝ կ'ուսումնասիրէ «Ընանունը կամ Կեղծ Սերէոս», ընդհանուր կրօնա-պատմական նիւթի մէջ իր հմտութիւնը ի յայտ կը բերէ «Կրօնի ճագումը եւ դիցաբանութիւնը ըստ համեմատական կրօնագիտութեան», անուն կրող հատորով: Ընդարձակ աշխատասիրութիւններու երրորդ արդիւնը կ'ըլլայ «Լրայ գեղեցիկ, համեմատական-քննական ուսումնասիրութիւն»: Բաց ի այս հատորածն գործերէ, որոնք «Հանդէս Ամսօրեայ» արտատպուած են, նոյն ուսումնասիրութիւն մէջ գրած է Դկտ. Մատիկեան ինչ ինչ յօդուածներ նմանապէս հայկական բովանդակութեամբ:

